Ի կատարումն ՀՀ վարչապետի ս.թ. հոկտեմբերի 26-ի թիվ 02/12.6/23778 հանձնարարականի.

2016-2017թթ. ընթացքում ամերիկյան կողմի հետ համագործակցության շրջանակներում ՀՀ ԱԱԾ Քննչական վարչության աշխատակիցները մասնակցել են ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի Թմրամիջոցների դեմ պայքարի վարչության, Հետաքննությունների դաշնային բյուրոյի, Իրավական համագործակցության գրասենյակի և ԱՄՆ Ներքին անվտանգության դեպարտամենտի Իմիգրացիոն և մաքսային գործակալության կողմից կազմակերպված դասընթացներին:

ՀՀ կառավարության և ԱՄՆ Պետքարտուղարության միջև կնքված պայմանագրերի համաձայն, Հայաստանում «Կենսաբանական ոլորտում ներգրավման համագործակցային ծրագրի» (ԿՈՆՀԾ) շրջանակներում (աշխատանքները համակարգելու նպատակով 25.03.2011թ. ՀՀ վարչապետի թիվ 240-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որը ղեկավարվում է ՀՀ ԱԱԾ կողմից) ԱՄՆ Պետքարտուղարության Պաշտպանական վտանգների նվազեցման գործակալության (ՊՎՆԳ) կողմից վերանորոգվել, կառուցվել և տեխնիկապես վերազինվել են ՀՀ Առողջապահության և Գյուղատնտեսության նախարարությունների (ԱՆ և ԳՆ) կենտրոնական, ինչպես նաև ՀՀ ԱՆ մարզային թվով 5 լաբորատորիաները: ԱՄՆ Պետքարտուղարության ՊՎՆԳ կողմից ԿՈՆՀ շրջանակներում 2018թ. աշխատանքները շարունակվելու են ՀՀ ԳՆ և ԱՆ լաբորատոր մասի աշխատակիցների վերապատրաստման, ինչպես նաև գիտական ծրագրի իրականացման մասով:

ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի վարչության հետ համագործակցության շրջանակներում ԱՄՆ-ում, Վրաստանում և ՀՀ-ում կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ, ինչպես նաև աշխատանքային գործուղումներ են իրականացվել Բուլղարիա և Դոմինիկյան Հանրապետություն:

ՀՀ ԱԱԾ Սահմանապահ զորքերը (ՍԶ) ԱՄՆ գործընկերների հետ համագործակցում են «ԱՄՆ և ՀՀ կառավարությունների միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու ոլորտում համագործակցության մասին համաձայնագրի» (կնքվել է 24.07.2000թ. և երկարաձգվել 19.05.2009թ.) և «ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտի և ՀՀ Ազգային անվտանգության ծառայության միջև սահմանային անվտանգության ոլորտում օժանդակության ու զանգվածային ոչնչացման զենքերի տարածման կանխարգելման ուղղությամբ համագործակցության վերաբերյալ համաձայնագրի» (կնքվել է 22.05.2012թ.) շրջանակներում:

ԱՄՆ Ներքին անվտանգության դեպարտամենտի «Արտահանման վերահսկման և սահմանային անվտանգության ծրագրի» (ԱՎՍԱ, EXBS) շրջանակներում համագործակցությունը մեկնարկել է 2001 թվականից, իսկ ԱՄՆ Պետքարտուղարության ՊՎՆԳ «Զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարի միջազգային ծրագրի» շրջանակներում՝ 2011 թվականից:

Հիշյալ երկու ծրագրերի ծավալման արդյունքում ՀՀ ԱԱԾ ՍԶ-ին տրամադրվել են անձնակազմի տեղափոխման և բեռնափոխադրման, ինչպես նաև արագ արձագանքման տրանսպորտային միջոցներ, ինժեներական

տեխնիկա, պետական սահմանի պահպանության տեսադիտարկման և ազդանշանային սարքեր, կապի միջոցներ, զանգվածային ոչնչացման զենքի հայտնաբերման սարքավորումներ և այլ տեխնիկական միջոցներ:

2016-2017թթ. ընթացքում ԱՄՆ Պետքարտուղարության ՊՎՆԳ «Զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարի միջազգային ծրագրի» շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- 2016թ. մայիսին և հոկտեմբերին անցկացվել են «Կանաչ սահմանում զանգվածային ոչնչացման զենքի կանխարգելման մարտավարություն և սահմանի հսկողություն» հնգօրյա դասընթացներ և «Սահմանային անվտանգության և կանխարգելման վերաբերյալ» տասնօրյա դասընթացներ,
- 2016թ. հունիսին ավարտին է հասցվել զանգվածային ոչնչացման զենքի տարածման կանխարգելման «Հայաստանի կանաչ սահման» ծրագրի 2-րդ փուլը, որի շրջանակներում կառուցվել է ՍԶ անլար կապի գլոբալ ցանցը, տեղադրվել է 5 ֆիքսված տեսադիտարկման սարք, տրամադրվել է 3 շարժական տեսադիտարկման սարք, իրականացվել է ցանցի օգտագործման և պահպանման ուսուցում,
- 2017թ. հունիսին և հոկտեմբերին անցկացվել են «Սահմանային անվտանգության և կանխարգելման վերաբերյալ» տասնօրյա դասընթացներ,
- 2016թ. դեկտեմբերին ԱՎՍԱ ծրագրի փորձագետների հետ համատեղ իրականացվել է ՍԶ անձնակազմի ուսումնական ծրագրի և կարողությունների գնահատում,
- 2017թ. հունիսին ԱՄՆ Օհայո նահանգի Քլիվլենդ քաղաքում անցկացվել է անլար գլոբալ ցանցի օգտագործման և պահպանման վերաբերյալ դասընթաց ՍԶ կապի բաժանմունքի անձնակազմի համար,
- 2017թ. նոյեմբերին ապահովվել է ԱԱԾ բարձրաստիճան պաշտոնյայի մասնակցությունն Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում զանգվածային ոչնչացման զենքի հակազդման վերաբերյալ եռօրյա սեմինարին Գերմանիայի Գարմիշ քաղաքում:

2016-2017թթ. ընթացքում ԱՎՍԱ ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- 2016թ. մայիսին և դեկտեմբերին ԱՄՆ չորս հրահանգիչների կողմից կատարվել է ՀՀ ԱԱԾ ՍԶ ուսումնական կենտրոնի ուսումնական ծրագրերի գնահատում,
- 2016թ. հուլիսին Երևանում անցկացվել է «Բեռնատար մեքենաների և ավտոբուսների զննման մեթոդները» դասընթացը,
- 2016թ. սեպտեմբերին Գյումրիում և օգոստոսին Վանաձորում անցկացվել են «Երկակի օգտագործման և ռազմական նշանակության ապրանքների տարբերակում և ճանաչում» դասընթացները,
- 2017թ. սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 2-ն ԱՎՍԱ ծրագրի շրջանակներում սահմանապահ զորքերի ուսումնական գործընթացների պլանավորման, ենթակաների ուսուցման տեսական և գործնական պարապմունքների անցկացման մեթոդիկայի փորձի փոխանակման նպատակով ԱՄՆ Նյու Մեքսիկո նահանգի Արտեսիա քաղաքում գործող Սահմանապահ ծառայության ակադեմիա են այցելել ՀՀ ԱԱԾ ՍԶ զինծառայողները,

- 2017թ. հոկտեմբերին անցկացվել է ՀՀ ԱԱԾ ՍԶ 24 հրահանգիչների պատրաստման տասնօրյա դասընթաց,

- 2017թ. սեպտեմբերին ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի Միջուկային անվտանգության ազգային վարչության (ՄԱԱՎ) Միջուկային մաքսանենգության հայտնաբերման և կասեցման (ՄՄՀԿ) գրասենյակը ՄԱԱՎ-ի և ՀՀ Մաքսային ծառայության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում ՀՀ ԱԱԾ ՍԶ-ին է տրամադրել երկու ճառագայթային վերահսկողության մեքենայացված շարժական համակարգ «MAK-PK2», «Ford Transit» ավտոմեքենայի բազայի վրա,

- 2017թ. սեպտեմբերին ՍԶ զանգվածային ոչնչացման զենքի ուսումնական լսարանում և լաբորատորիայում ԱՄՆ-ից և ՌԴ-ից ժամանած դասախոսական անձնակազմի միջոցով անցկացվել են ռադիացիոն վերահսկողության մեքենայացված շարժական համակարգի օպերատորների և սպասարկման անձնակազմի համար նախատեսված դասընթացներ, որոնցում ներգրավվել է նաև Մաքսային ծառայության անձնակազմը:

Հարկ է նշել, որ ԱՄՆ Պետքարտուղարության ՊՎՆԳ-ը շարունակում է աջակցել ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերին անլար ցանցի շահագործման և պահպանման գործում, տրամադրում է սարքավորումներ և պահեստամասեր, կատարում վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև շարունակվում է ՍԶ անձնակազմից «Սահմանային անվտանգության և կանխարգելման վերաբերյալ» դասընթացի ՍԶ դասվարների պատրաստումը, ուսումնական նյութերի տրամադրումը: ԱՄՆ Ներքին անվտանգության դեպարտամենտի «Արտահանման վերահսկման և սահմանային անվտանգություն ծրագիրը» ևս շարունակում է աջակցել ՀՀ ԱԱԾ ՍԶ-ին ուսումնական ծրագրերի, ծրագրային ապահովման և համակարգչային տեխնիկայի տրամադրման գործում: ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի Միջուկային անվտանգության ազգային վարչության (ՄԱԱՎ) Միջուկային մաքսանենգության հայտնաբերման և կասեցման ծրագիրը (ՄՄՀԿԾ) նույնպես պլանավորում է շարունակել ՀՀ ԱԱԾ ՍԶ-ին հատկացվող աջակցությունը՝ ԱՄՆ Պետքարտուղարության Պաշտպանության դեպարտամենտի Սպառնալիքների նվազեցման գործակալության (DTRA) կողմից իրենց տրամադրված ՀՀ ԱԱԾ ՍԶ «Անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկին» համապատասխան:

ՀՀ ԱԱԾ